

Տարեկան գինը 10 րուբլի, տարվանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

(Պատրագրադարացի դիմում են ուղղակի
Կապուս. Քոմպոզ. „Մուսա“)

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

(Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ):

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Մի նոր միջոց:—Ներքին տեսութիւնը, Նախկին Մարզային, Նախկին Վ. Ազգային, Ներքին լուրերը:—Արտաքին տեսութիւնը, Թիֆլիսի լուրերը:—Պատասխանագիր Բարձր Դրան:—Վաճառքի հետադիմութիւնը:—Յայտարարութիւններ:—Բանասիրական ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ:

ՄԻ ՆՈՐ ՄԻՋՈՅ

«Միջազգային հեռագրական ընկերութեան» երեկվայ հեռագիրը տեղեկացրեց մեզ մի սարսափելի անցքի մասին: Մեզք ինքն իրան այնքան սարսափելի է, որ մենք հրաժարվում ենք հաւատալ նրա ստուգութեանը:

Ներսէս պատրիարքը գնացել է այցելութեան արտաքին գործերի թիւրքաց մինիստր Աբդուլին փաշայի մօտ, խմել է նրա մօտ մի թաս կաֆէ,—և տուն վերադառնալով զգացել է, որ թունաւորված է եղել... Բաղդադաւրապէս բժշկները ազատեցին պատրիարքին հաստատ մահից:

Ահա, ուրեմն, մի նոր միջոց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Եղբի թափանցիկ և մաքուր ինչպէս օտարաց, սպիտակ ինչպէս ձիւն,—բաւարարեց ինչ ազատութիւն:

Շէկապիր

Բժշկի և հաղորդական յարաբերութիւնները ատ զարմանալի են հայ հասարակութեան մէջ, որովհետեւ ժողովուրդը չէ գիտէ, թէ ինչ կարելի է ինչ պէտք է պահանջել բժշկից. ինչ է իր պարտաւորութիւնը և իրաւունքը: Մի քանիսը պահանջում են բժշկից անտուճակային զօրութիւն, անանց կատարելու նրա տուած խորհուրդները:

Ներ հիւանդը մեռնում է, նրա առաջվայ հիւանդոտ և թող կազմուածքին հիւանդի տէրը ոչ մի նշանակութիւն չէ տալիս, և այս դէպքում մեղադրվում է բժիշկը և ոչ երբեք հիւանդը և կամ նրա տէրը: Հիւանդը կամ հիւանդատէրը երբեք իրենց պարտաւոր չեն համարում, եթէ բժիշկը նրան անողջանդամ է, ինչքան էլ որ հիւանդութիւնը դժուար բժշկելի լինի: Բժիշկի աշխատանքը համարում են մի չնչին բան, որ պարտին չէ նաև ուղարկութեան, Հիւանդ ժամանակ երբ ցաւը նեղում է, նա աղիտորմ հայցուածքով ասում է. «Երբեք չեմ, աման, դու ես իմ փրկիչը, ինչ ուղում ես պահանջիր, և այն և այն»:

Հիւանդին ասել, այսպիսի բուժանքներով ժողովուրդը չէ կարողանում պահել, որովհետեւ զիտեմ թէ նրա միտքն ինչ է, Բայց անողջանդամ յետոյ այդ մարդը նաև չէ էլ կամենում ճանաչել իր ցաւը բժշկից: Սրա պատճառը կարող է լինել երկու տեսակ. կամ բժշկի աշխատանքը այնպէս չնչին է համարվում, որ նաև ուղարկութեան արժանի չէ տես-

ազատվել մի բաղադրական թշնամուց:

Այդ տեսակ միջոցներ մարդկութիւնը գործ էր դնում հին ժամանակներում, գործ էր դնում նոյնպէս միջին դարերում: Մի բաղադրական թշնամու, հակառակ կուսակցութեան պարագլուխի դէմ այդ տեսակ միջոցներ գործ դնելը ապացոյց է մի կառավարութեան թուլութեան: Թիւրքական եթէ քիչ թէ շատ ոյժ զգար իր մէջ ի հարկէ, չէր գործ դնի թոյն իր հպատակ մի ազգութեան ներկայացուցչի դէմ, որի յանցանքը միայն նրա մէջն է, որ իր ազգի համար բարենորոգումներ է պահանջում:

Բայց դորանով թիւրքիսն ինքն իրան կը խայտառակէ Աւրոպայի աչքում, ցոյց կը տայ որ հայերին ոյժ է համարում, որովհետեւ ուրիշ միջոց չէ գտնում մաքաւել նրանց հետ, եթէ ոչ թոյնի միջոցով ազատվել այն

նում, կամ թէ, որ աւելի ճիշդն է, բժշկին մտադիր չէ վարձատրելու:

Ուրիշ փաստ պատմեմ. մի բժիշկ տառնութիւնը շարունակ բժշկում էր մի անում, և միշտ յաջողակ. պատահեց որ այդ տան սիրելի դուստրը դժուար հիւանդութիւն ստացաւ, անողջանդամ անկարելի եղաւ, և մեռաւ: Բժիշկը դառաւ այդ տան համար վատ բժիշկ, անպիտան մարդ, պատրաստ էին նրան քարկոտրել և համարում էին նրան իրենց ամենամեծ թշնամի: Դրանք բժշկից պահանջում էին անտուճակային զօրութիւն: Այսպիսի վարմունքը ի հարկէ անվստիք է խելացի և խիճ ունեցող մարդուն:

Ժողովուրդը ամենից առաջ չէ պէտք է մտաւորայ, որ բժիշկը մարդ է, բոլոր մարդկային արժանաւորութիւններով և պակասութիւններով, նա կարող է սիրել և առել, մէկից բաւական կամ անբաւական լինել, նրա քեֆը այս օր տեղն է, վաղը ոչ, մէկը խելօք է, միւսը յիմար, մէկը գիտուն է, միւսը պակաս գիտուն, մէկը բարի է, միւսը չար, մէկը ճշմութեամբ է կատարում իր գործը, միւսը թող, այսօր հիւանդ է, էջուց անողջ, վերջապէս նա էլ ձեռք պէս և ձեռք նման մարդ է, ուրեմն հրեշտակի յատկութիւններ պահանջել բժշկից անկարելի և ցեղարկան է միտաւորայ:

Երբ մարդուն մենք բոլորս ատում ենք, որովհետեւ նա վատ օրինակ է, հասարակութեան համար ծանրութիւն է, որովհետեւ ծուրութիւնը տանում է զէպի չարագործութիւն, որից վնասվում է մի և նոյն հասարակութիւնը: Ով որ ծոյ է, նա արժանի չէ ցամաք հացի:

Մարդ պարտ է աշխատանքով (բացառութիւններ կան), մեղքից ամեն միջոց պարագլուխ է մի գործով, որով և վատաւար է իր ապրուստը: Ինչպիսի պարագլուխ մարդիկ: Կը զարմանաք, եթէ ասեմ, որ բոլոր մարդիկ պարագլուխ են առեւտուրով: Մարդու միակ պարագլուխն է վաճառականութիւնը: Այս պէտք է ընդարձակորէն հասկանալ: Թէպէտ թագաւորութեան մէջ կան ժառանգական ազնուականներ զատակարգ, որոնք արհամարում են վաճառականներին, բայց նրանք իրանք էլ վաճառականներ են, որովհետեւ ծառայե-

մարդուց, որ ամենաանուղուտ կերպով պաշտպան է հանդիսանում իր ազգի իրաւունքներին:

Ներսէսին Աբդուլին փաշայի ձեռքով թունաւորվելը. եթէ այդ լուրը ստուգվի, ամենամեծ փաստ կը բերի նոյն իսկ թիւրքիային, ցոյց տալով Աւրոպային, որ անհնարին է թիւրքիային վերանորոգել, անհնարին է դարձնել նրանից մի բարեկարգեալ եւրոպական պետութիւն, այլ նա միշտ կը մնայ մի ասիական, վայրենի երկիր, որ ընդունակ չէ ընդունել եւրոպական բաղադրակրթութիւնը:

Միթէ այդ անցքը չի համոզի Աւրոպային, որ թիւրքիան այլ ևս արժանի չէ պետութիւն կոչվելու, և որ նրա ամենաբարձր պետական մարդիկն անգամ ինչքան էլ կրթված ձևանային, միշտ մնում են մօնգօլներ:

Միթէ եւրոպական դեսպանները, եւրոպական դիպլոմատիայի ներկայացուցիչները Կ. Պոլսի մէջ

լով և ուժեղ ստանալով կառավարութիւնից, ծախում են նրան իրենց մտաւոր և մարմնաւոր ոյժը: Նոյն իսկ կառավարողներն էլ վաճառականներ են, որովհետեւ նրանք աշխատելով իրենց երկրի համար, ստանում են վարձատրութիւն և ապրուստ: Այս վաճառականներից մէկը ապրանք է ծախում, միւսը ծախում է իր մարմնի ոյժը, օրինակ մշակները, բանուորները, զինուորական ծախում է իր զինութիւնը, որ է նրա մտաւոր ոյժը ապրանքը, այս վերջինը աստիճանաւոր է, լրագիր կամ ամսագիր հրատարակող է, դրքեր է դրում և այլն:

Բոլորն էլ ծախում են իրենց աշխատանքը: Այն մարդիկ, որոնք ծախում են իրենց զիտութիւնը անուանվում են մտքի ազնուականներ, իսկ փող դիզողները—հարուստները անուանվում են փողի ազնուականներ:

Աշխարհի ապագան այս երկուսին է պատկանում, այսինքն խելքին և փողին: Մարդկութեան բոլոր դասերը պէտք է հնազանդվեն այս երկուսին, բայց ինչքան ցնայ, այնքան ոյժը մտաւոր ազնուականների ձեռքը պէտք է անցնի: Աշխարհի կառավարիչը միշտ խելքն է, ինչպէս և ասում է եղիշէ վարդապետը «Տոգոյ և մարմնը միտք են կառավարու: Դառնալով դէպի բժիշկը: Բժիշկը քիչ է անում, բոլորը էլ գիտէք, որ նա հիւանդներ է բժշկում, նա ծախում է իր գիտութիւնը հիւանդին, այսինքն անողջութիւն է ծախում. սա միշտ իր ապրանքը նորոգում է նոր զրքեր կարգաւոր, բժշկութեան նոր ձևեր սովորեցնում և գործ ածելով աւելի պիտանի տեղեր: Ուրեմն նա պիտի ստանայ իր ծախածի վարձը: Բժշկին կարելի է անուանել անողջութեան վաճառական: Բժշկի խանութը օր և գիշեր բաց է, ով որ դիմում է նրան, նա ստանում է ամենաբար արքանք, որ ունի բժիշկը: Բժշկի անձնական օգուտը պահանջում է, որ նա ցանկացողին միշտ իր ամենաբար պարանքից տայ: Մենք բժիշկներ, չենք նմանում այն վաճառականներին, որ իրենցներն են ծախում, և երբեմն զիտմամբ լաւ ապրանքի տեղ վատ են տալիս, և հազար անգամ երդվում են թէ իրանց կեանքում ոչ ոքի չեն խաբել: Մենք, ի հարկէ, նրանց չենք հաւատում, իսկ բժիշկին հաւատում էք, երբ նա ասում է՝ սո-

անտարբեր կը մնան և չեն պահանջել Աբդուլին փաշայի հրաժարեցնել իր պաշտօնից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՁԴՈՒԹՅՈՒՆ

Յունիսի 10-ին

Ահաւասիկ կրկին ուղարկում եմ 75 ր. յօդուտ սովատանջ մեր հայ եղբայրների, որ անցեալ ուղարկածի հետ միասին կը լինի 267 րուբլ, ու խնդրելով, որ այս ևս բարեհաճէք հասցնել ուր հարկն է, իսկ նուիրատուների անունները տեղեկութեան համար տպագրել «Մշակի» էջերում:

Յարութիւն Գանձումանց 10 ր., Կապիտան Յարութիւն Խոսրովանց 25 ր., Պողոս Շլիթանց 25 ր., Հերիքանա Շլիթանց 5 ր., Յակովբ Ղափանանց 5 ր., Անայտ ոմն 2 ր., Պողոս Պապեան 1 ր., Յ. Ալիազեան 5 ր., Պետրոս Գանձուման 20 ր., Նունէ Գանձուման 5 ր., Գեորգ Տերիմանեանց 10 ր., Պողոս Գանձումանց 10 ր., Շուշան Գանձումանց 5 ր., Մակար Թուշալով (ղլարցի) 25 ր., Գալուստ Բօրուբաշեանց 5 ր., Ղազար Բօրուբաշեանց 5 ր., Յովհաննէս Եւրպեանց 5 ր., Եղիարեթ Եւրպեանց 5 ր., Գաբրիէլ Գանձուման 1 ր., Դանով 2 ր., Տամար-Դանիէլ 1 ր., Յովհաննէս Մ. Ուրուխանեանց 1 ր., Նիկողայոս Նալբանդեանց 3 ր., Յակովբ Մերձումանց 2 ր., Գրիգոր Յ. Նաղարեանց 2 ր., Գրիգոր Մերձումանց 1 ր., Օրորդ Մ. Միլեու-

րանից լաւ պիտանի դեղ չը կայ, չունեմ կամ չը գիտեմ: Այս բոլոր վաճառականներից ըստ մեծի մասին ամենապիտի վաճառականը բժիշկն է, որովհետեւ նրա խանութը միշտ բաց է, նրան կա բիլի է գիշեր ցերեկ անհանգստացնել, նա միշտ պատրաստ է ձեռք ապրանք տալ, երբեք ձեռք չը խաբի, թէ և գիտէ որ հասարակութիւնից շատերը նրան խաբում են, նրա ապրանքը համարեա թէ միշտ նիսիա են (պապիկ) տանում և շատ անգամ չեն վճարում. գիտէ նմանապէս, որ այդ խաբերանքը միշտ անպակաս պէտք է լինեն իրեն համար, բայց այսու ամենայնիւ նրան զիտող առանց ծանր պատճառի, երբեք անբաւական դուրս չէ դնում: Նրա տնից: Այս բաւական չէ, կան աղքատ մարդիկ, որոնք գիմելով բժիշկին, ստանում են նրանից փողով և աշխատութիւնով առած ապրանքը միշտ ձրիաբար, և սրանց թիւը շատ մեծ է, բայց որ վաճառականը մի է ժամ չորացու կը տայ աղքատին ձրիաբար:

Միթէ բժիշկը պարտաւոր է մշտական ապրանք տալ (անվարձ բժշկի) աղքատին, ոչ երբեք. սակայն նա տալիս է, երբ աղքատը պահանջում է, Չէ որ բժիշկն էլ իր ապրանքը (գիտութիւն, հմտութիւն) փողով և աշխատանքով է ձեռք բերել, ինչպէս և միւս վաճառականները: Աղքատին պահել և նրան օգնելը հասարակութեան պարտաւորութիւն է, որովհետեւ աղքատը ամբողջ հասարակութեան չքաւոր անդամն է, բայց մեր հասարակութիւնները այնքան զարգացած չեն, որ կատարեն իրենց բարոյական պարտաւորութիւնը հիմնելով հիւանդանոցներ, աղքատանոցներ և այլն:

Հասարակութիւնը իր այդ պարտաւորութիւնները կատարում է մասնաւորապէս, իսկ ամբողջ հասարակութիւնից միայն բժիշկն է, որ միշտ կատարում է իր պարտաւորութիւնը դէպի հասարակութեան աղքատ անդամը, բժշկելով նրան ձրիաբար և երբեմն էլ տալիս է նրան դեղը ձրիաբար: Բժշկից շատ հարուստներ անբաւական են լինում, և թէ նրանցից բժիշկը փող չունի, աղքատին չէ կաթիլով հարուստից փող չառնի, աղքատին չէ կաթիլով տալ: Այսինքն բժիշկը նրան ձրիաբար. բժիշկ և ամեն մարդու բարոյական պարտաւորութիւնն

մեանց 1 ր., որ, Ն. Կրտսեայ 5 ր., Լուսան-
Յովհաննիսեանց 1 ր., Կարապետ Բաղդիսեանց 10
ր., Կոստան Սերերապետեանց 5 ր., Խաչակ Գան-
ջումեան 10 ր., Մկրտիչ Խաչանեանց 3 ր., Կա-
րապետ Կարախանեանց 5 ր., Գարբիէլ Թուշմա-
լեանց 10 ր., Խեչոյեանց 5 ր., Սարգիս Մեղրեանց 10
ր., Գեորգ Բաղդադեանց 1 ր., Յ. Վահանյան Մկր-
տեանց 1 ր., Գարբիէլ Ժանանայ Տարփայեան 5
ր., Արմենակ Հայկունի 75 Կ., Կարապետ Խաչա-
նեանց 3 ր., Գումարը 268 ր. 75 Կ., փոստի ծախքը
(1 ր. 75 Կ.) դուրս գալով, մնում է 267 րուր:

Գարբիէլ Ժանանայ Տարփայեան

ՆԱՄԱԿ Վ. ԱԳՈՒԽԻՍԻՑ

25 յուլիսի

Այս ձեռնարկայ հացի թանգուրինը անցաւ. աղ-
քաւորները պիտի 10 րուրով ախր գնելուց ա-
ղաւորեցան, այժմ ցորեանը ծախուիւ է 2 ր., իսկ
գարին 1 ր.: Փողոցներում այլ ևս մարտնչեաներ
չեն թափառում. տարվայ յաղող հունձը ամենին
բաւականութիւն է տալիս:

Աղուրեցիները մի պատուհանից աղաւորեցան,
բայց Աստուած նրանց համար մի նոր պատուհան
ուղարկեց.— դա է հաշակաւոր տէր-Մովսէս քա-
հանան: Ես չեմ կարծում որ Վշակին ընթերցող-
ների յիշողութիւնից մոռացված լինի այդ քահա-
նայի պատմութիւնը. 78—79 թիւ համարներում
չառ գրվեցաւ նրա մասին: Այդ քահանան որ ա-
ւելի քան տասն տարի ամբողջ Աղուրիսը ալեկո-
ծութեան մէջ էր պահել, ամեն օր մի նոր խոս-
ութիւն էր յարուցանում, իշխանների մէջ թըշ-
նամութիւն էր սերմանում, սուղերում անդադար
գնացողներ էր տալիս, մէկին զրգարտում էր զը-
րեակն յանցանքի մէջ, միւսին վրա չառ էր դը-
րում.— մի խոսքով, բայց իր քահանայական սուրբ
պարտաւորութիւններից, նա ամեն անկարգու-
թիւն գործում էր:

Ճողովուրդը ձանձրանալով, քանիցս անգամ բո-
ղոքեց հոգեւոր իշխանութեանը, Էջմիածին, սինոդ,
վիճակային կոնսիստորիան լցվեցան խնդրանքներով
յիշեալ քահանայի մասին, որ նրան հեռացնեն Ա-
ղուրիսը, որ ժողովուրդի անարգութիւն, հանգստանայ,
և անկարգութիւններին վերջ տրվի: Այս հանգա-
մանքները ի նկատի առնելով, Էջմիածին սինոդը
կարողացան նրան հեռացնել Աղուրիսից, մասնա-
ւանդ, որ նա բնիկ աղուրեցի չէր և ոչ Աղուրի-

սում որ և ինչ ծուխի վրա ձեռնադրված էր: Սի-
նոդի հրամանը կատարվեցաւ, և մի տարուց աւել
է, որ յիշեալ քահանան հեռացրած էր Աղուրիսից,
և խռովութիւնները զարգացած էին:

Յանկարծ, կրկին յայտնուիւ է նա, ում հրամա-
նով, ում հրաւերքով.— չը գիտեմ: Ես չեմ կար-
ծում, որ հոգեւոր իշխանութիւնը, մոռանալով բո-
լոր անցեալը, մոռանալով այն բոլոր անիրաւու-
թիւնները, որ գործվել են այդ քահանայի ձեռքով,
հակառակ ժողովրդի կամքի և խնդրանքի, բարե-
հաճէր նրան կրկին նշանակել Աղուրիսում քահա-
նայ: Ես կարծում եմ, որ այդ խռովարարը, եր-
կար թափառելուց յետոյ, ամեն տեղից վաճառված
լինելով, ինքնակամ և առանց բարձր հոգեւոր իշ-
խանութեան թոյլտուութեան, կրկին եկել է Աղու-
րիս, ժողովրդի հանգստութիւնը վրդովելու և ինչ
խռովութիւնները դարձաւ յուզելու համար: Տա-
րակոյս չը կայ, որ բարձր հոգեւոր իշխանութիւնը
այդ հանգամանքների վրա ուղադրութիւն կը
դարձնէ և թոյլ չի տալ, որ վերջինը աւելի չար
լինի, քան առաջինը...

Թեմական տեսուչ պ. Պ. Պառլեանցը այստեղ
եկաւ, որ և ինչ նշանաւոր գործ կատարել չը
կարողացաւ. միայն իր «Շահէն» վէպի համար
(որը կարծեմ դեռ գրված չէ) կարողացաւ մի 50
բաժանորդ գտնել: Գարեգանի փողերը, որ նուի-
րատունները պարտաւորակ էին տուել մայիսի
1-ին վճարելու պայմանով, դարձեալ չը ստացվեցան,
ոչ միայն դրամաւորներ չը տուեցին, այլ շատերը
մինչև անգամ տոկոսները չը վճարեցին:

Մեր դպրոցների հարցաքննութիւնները և օրիոր-
դաց դպրոցի ձեռագործների վիճակահանութիւնը
վերջացան. զուտ տրդիւնը գոյացաւ 120 ր.: Պ.
տեսուչը մի յիշար առնականութիւն արեց,
օրիորդներին մէկն էլ ձառ կարդաց, ի հարկէ, ոչ
իր դրածը:

Այս տարի հրաւիրվեցաւ որպէս վարձպետ
մեր դպրոցների համար պ. Ս. Սուլիսեանցը 500
ր. առնելով. պարտք սովորել է Ներսիսեան դը-
պրոցում, կարծեմ, աւարտել է մի և նոյն դըպ-
րոցում: Նրանի թէ, մեր դպրոցները մաքրվելն
չարաւաններէն և նրանց փոխարինելն բարեկից
վարձպետներ, որպիսիներից մէկն է պ. Սու-
լիսեանցը:

Մեր Ս. Գրիգորիան եկեղեցին որ առաջին
եկեղեցին է Աղուրիսում և մեծ ծուխ ունի, մօտ
մի տարի է, որ դուռը փակված է, քահանայ
չունենալու համար: Մինչև երբ այսպէս պիտի
մնայ,— Աստուած գիտէ: Կարծեմ, մի քանի պա-
րոններ իրանց կապրիզները յազդեցնելու համար,

բաւական է, որքան ժողովուրդը առանց ժամի և
աղօթքի պահեցին:

Մեր վերին-գետի քահանայ տէր-Սարգիսը հար-
րած ընկաւ գետը խնդրվեցաւ, վերին-գետից էլ
երկար ժամանակ առանց քահանայի մնացին, յի-
տոյ օրդուրթիցների ձեռնադրել տուած քահա-
նային նրանց ձեռքից խլեցին: Այժմ Սրբուբաթի
եկեղեցին փակված է մնացել: Մի խօսքով, Աղու-
րիսում, ուր վաղէ կայ, տասնի չափ եկեղեցիներ
կան, այսուամենայնիւ, քահանաների սով է տիրում.
և այդ սովի ժամանակ մեղ կերակրում են տէր-Մով-
սէի նման հովիւներով: Ծանաւալներն աղուրեցի-
ները, որ այսպէս հոգ են տանում իրանց եկեղե-
ցիների մասին, զարգարում են նրանց թանգուրի
զարգելով, ահագին գումարներ են ծախսում, բայց
դռները փակ են պահում:

Երբ ժողովուրդը այս աստիճան անհոգ է,
երբ նա մասնաւոր մարդկանց կրքերի պատճա-
ռով, թողնում է եկեղեցիները առանց ժամերգու-
թեան, դարձեալ հոգատարութիւնը մնում է բար-
ձրը հոգեւոր իշխանութեան վրա, որ իր հօտը ան-
խնամ և զուրկ հոգեւոր միջնորդութիւններից չը
թողնի: Տէր-Մովսէսները միայն կարող են ժողո-
վրդի մէջ շարունակեան սերմ սերմանել, և ոչ թէ
քրիստոնէական առաքնութիւն, սրբից դուրի ենք
մենք:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՂԱՐԱՔԻԼԻՍԻՑ մեզ գրում են, թէ տեղային
հեռագրատան մէջ ծառայող Ա. Ս. որ ուսում է
ստացել Ներսիսեան դպրոցում, հակառակ օրէնքի
և ազնութեան, շատ զեղծումներ է գործում հե-
ռագրական կանոնների դէմ: Սրինակ, Ղարաքիլիսից
տուած կամ ստացված հեռագրի նկարագրութիւնը
թիւնը յայտնում է օտարներին, որ պէտք էր իբրեւ
զաղտնիք պահել և ուրիշ շատ անիրաւութիւններ է
գործում: Պարոնի վրա զանգատներ. եղան, բայց
նա տակաւին իր պաշտօնում մնացած է: Ղարա-
քիլիսիցիք նրա օրապահութեան ժամանակ հեռա-
գիր չեն տալիս:

Մեզ գրում են ՂԱՄԱՐԼՈՒ գիւղից. նա ունի
200 տուն հայ բնակիչ, որոնց բոլորը երկրագործ
և այգեգործ են, իսկ մնացեալ բնակիչները թուրք
են: Ղամարուն, լինելով Գառնի-Բաւարի կենտրո-
նական մեծ գիւղը, նրա մէջն է ամբողջած տե-
ղային վաճառականութիւնը: Այս գիւղում կան

մինչև 100 խանութներ, որ մեծ մասամբ պատ-
կանում են ուրիշ երկրներից այստեղ եկած հրեա-
ներին: Խանութները ամենափոքր թիւը պատկա-
նում է հայերին և թուրքերին: Հրեաները իրանց
ձեռքն են առել տեղային մենավաճառութիւնը:

ՂԱՄԱՐԼՈՒ մեզ գրում են, որ պ. Բողդան Կաճ-
կաճեան Աստրախանի վիճակաւոր առաջնորդի
կարգադրութեամբ նշանակվել է թեմական տե-
սուչ 2500 ր. տարեկան առնելով: Բայց պ. Կաճկա-
ճեան ընդունելով պաշտօնը մերժել է առնելը ա-
սելով, որ վիճակի դպրոցները աղքատ են և ի-
րանց կարողութիւնն ունեն նիւթական միջոցների,
այլ համաձայնվել է միայն ճանապարհի ծախսը
ընդունել և ստանալ օրական 3 րուր այնքան ժա-
մանակ, քանի որ կը չըլէ թեմի մէջ:

Այս օրերս մի միջնորդական լուր ստացանք
Կ. Պոլսից, այն է որ Արարատեան, «Գարեգա-
սիրաց»—Արեւելեան և Արեւիկեան երեք հայոց ըն-
կերութիւնները վերջապէս միացել են մի ընկերու-
թեան մէջ, և կրում են այժմ «Միացեալ ընկե-
րութիւն» հայոց անունը: Այդ մասին «Արարա-
տեան» ընկերութեան վարչութիւնը մեզ պաշտօ-
նապէս տեղեկացրեց նամակով և խնդրում է մեզ
որ այսուհետև յօգուտ «Արարատեան» ընկերու-
թեան հաւաքովի դրամները ուղարկենք «Միա-
ցեալ ընկերութեան»:

Ստացանք ԲԱԳՈՒԽԻՑ պ. Նրատուրեանից, 460
րուրը գումարը հանգանակած յօգուտ վասպու-
րականի սովեաների: Փողը ստացանք Թիֆլիսում
պ. Ա. Մարկի-Աղաբեանից միջնորդութեամբ:

Չը գիտեմ ինչ է պատճառը որ դաւառացի
մի քանի հայեր սովորութիւն են ընդունել, գրվե-
լով «Մշակին» կէս արուր, ուղարկել մեզ 5 րուրը
և ոչ թէ 6 րուրը: Այն ինչ ամենքին լաւ յայտնի
է որ «Մշակին» կէս տարվայ գին 6 րուրը է:

Մեզ պատմում են որ Թիֆլիսի Անանեան օ-
րիորդական դպրոցի տեսուչ պ. Չիգանեանց շատ
անշնորհ կերպով կառավարում է յիշեալ դպրոցը:
Հոգաբարձուներն էլ, բայց թշկապետ Շահպա-
րուհեանցից, անտարբեր են դէպի դպրոցը և բոլո-
րովին չեն վերահսկում Չիգանեանի գործունէու-
թեանը: Սա կառավարում է դպրոցը բոլորովին
կամայական կերպով: Սրինակ մի պատուական վար-
ժուհու, որ մանկավարժութեան հետ աւելի ծա-
նօթ է, քան թէ միւսները, առանց պատճառ
ն երի բացատրութեան, ինչպէս չեն օւ-

է առնել հարուստից և տալ աղքատին, և միայն
այդ կերպիւ կարող է բժշկիկ կանոնիչ դառնալ
(բէգուլատոր—regulator) հարուստի և աղքատի
մէջ: Կանոնիչ ստեղծել հարուստի և աղքատի մէջ
անհրաժեշտ է, որովհետև հարուստը ամեն երկրում
ճնշում է աղքատին և նրա քրտինքով հարստա-
նում: Եթէ բժշկիկ ձրիաբար բժշկում է աղքա-
տին, այդ մարդասիրութեան մի նշան է, բայց ինչ
կը նշանակէ ձրիաբար բժշկել հարուստին, այդ նը-
շանակում է տարածել անբարոյականութիւն, նշա-
նակում է մարդուն սովորեցնել մոռնալ հաց ու-
տելու, ուրիշի հաշուով ապրելու, նրան դարձնել
հաղիւրդաբար: Եթէ հաղիւրդաբարների թիւը կարգա-
նենք, որ առանց էն էլ շատ մեծ է, այն ժամա-
նակ մենք բոլորս պէտք է դառնանք խաբէրանք
կամ աւաղակներ:

Գուր գիտե՛ք քահանան (հոգեւոր բժշկիկը), փա-
տաբանը, վարդապետը հասարակական գործիչներ
են ինչպէս և բժշկիկը, բայց թող փորձի աղքատը
քահանային կրօնքի կամ պատիւի փող չը տալ,
փատաբանին պրօցէսի (լաւ թէ վատ վերջա-
նելու) վարձը չը վճարել, վարձապետին դասերի
փող չը տալ և եթէ աղքատը երկրորդ անգամ
մի և նոյն խնդրով դառնալ դրանց, կը տեսնի
որ դրանցի միայն հազարից մէկը կը կատարի
նրա խնդիրը, իսկ եթէ այդ աղքատը ամեն օր
մի ամիս (կամ աւելի) շարունակ օգնութիւն խնդրի
բժշկից, բժշկիկը երբեք նրան չի գրկի իր խո-
հորդներից, եթէ միայն հիւանդը աշխատում է
այդ խորհուրդներին հետեւել, այսինքն բժշկիկը կը
տալ նրան մի և նոյն ապրանքը, ինչ որ տալիս է
հարուստին, բայց հարուստին ձրիաբար ապրանք
տալը, ինչպէս յիշեցի, նշանակում է անբարոյակա-
նութիւն տարածել:

Այժմ դառնա՛ք բժշկի և հիւանդաբանի կամ
հիւանդի յարաբեր. լիճանց վրա: Տեսնե՛ք ինչպէս
պէտք է լինեն դրանց յարաբերութիւնները միմեանց
հետ, որ հիւանդը կարողանայ շուտ առողջանալ,
ի հարկէ իւրաքանչիւր հիւանդ կամենում է առող-
ջանալ և առողջը կամենում է չը հիւանդանալ:
Առողջը հիւանդանում է և բժշկից պահանջում է
օգնութիւն, իսկ բժշկիկը ինչպէս մարդ պէտք է

աշխատի օրէնք նրան, եթէ հիւանդը լինի նրա ա-
րեւաբար թշնամի: Պէտք է ուղիղն ասեմ, ես
չեմ կարծում որ աշխարհում լինի մի բժիշկ, որ չը
կամենայ առողջացնել իր հիւանդին, բայց շատ ան-
գամ բժիշկը թողնում է հիւանդին, որ էլ երբեք չը
տեսնէ նրա երեսը: Պատճառն ինչ է, այսպիսի
դէպքերում գլխաւորապէս կարող են լինել չորս
պատճառ: Այս պատճառները պէտք է առաջ բը-
րեմ կարգով, իրենց ծանրութեան համաձայն, թէ-
պէտ և գիտեմ որ ինչ շատերը կը բաժնասեն, բայց
Աստուած ում շատ է տուել, նրանից մարդիկ շատ
են պահանջում, ում քիչ է տուել, մինք պէտք է
նրան ասենք. եղբորմեսիկ քիչ մարդուէրն Աս-
տուած և թողութիւն չորհեցէ ամենայն յանցա-
նաց քոյր: Որինակներով բացատրեմ միտքս:

1) Ամառ ժամանակ բժշկին կանչում են հի-
ւանդի մօտ, հիւանդը ունի էրօք (տիֆօիդ).
բժիշկը մանում է հիւանդի սենեակը, նա պառ-
կած է տաղտի կամ գետնի վրա, նրա երկու կող-
մից լուսամուտները բաց են և անողորակաբան
անցու դարձ է անում սենեակում, որ առհասա-
րակ շատ վնասակար է: Հիւանդը ծածկված է
երեք հաստ ծածկոցով (կորդանով), նստաց-
նում ևս նրան, հագին ունի տաք շորեր, կոճկած
Եթէ հիւանդը մօրուք կամ բեղեր չունի, անկարե-
ւի է իմանալ նա աղայ է թէ աղիլի, որովհետև
նրա գլուխը փաթկալի են 3—4 շալով, տես-
նում էք նրա երեսի վրայ մի մասը: Այս շորե-
րով հիւանդը նմանում է այնպիսի մօլի, որ այժմ
միայն հին պատկերների վրա կարելի է տեսնել,
որովհետև ներկայումս նաև մօլաները մեծ չափա-
չին գնում իրենց գլխին: Եթէ հիւանդը այնպէս
փաթկալված է, պէտք է իմանալ որ տանը պա-
ռաւ կանաչ կան: Հիւանդի շորերը հանել ես
տալիս, ծածկոցը մի կողմ քաշում, գլուխը բացա-
նում և հիւանդին ծածկում բարակ ծածկոցով կամ
սաւանով (չարսաւով), այդ ժամանակ հետաքրքրի
է տեսնել պառաւ կնոջ յուսահատ երեսը, նրա
կարծրելով բոլոր բժշկութիւնը և զեղերը ծածկոցի
մէջ են:

Բաց լուսամուտները ծածկում ես, հիւանդին
քննում ես, զեղը գրում ես, պահպանութեան ձեռք

և ուտելիքը օրոյում և կէս ժամ համողում թէ
ինչպէս արեցի և ասեցի, այնպէս պէտք է պա-
հէ՛ք հիւանդին: Խոստանում են վերջապէս: Միւս
օրը գալիս են հիւանդի մօտ, Տէր Աստուած, ինչ
կը տեսնում, լուսամուտները բաց, ժամին փշուր
է, հիւանդը չորերը հաղած, պառկած է երեք ծած-
կով: Եթէ և գլխի չափն կարծես թէ աւելի
մեծացել է, նրա ուտելիքը եղել է անպատճառ
թթու խմոր և ինչ որ հիւանդը ցանկացել է, ո-
րովհետև պառաւ կանաչը նախապարտունը ու-
նեն, թէ եթէ հիւանդի ցանկացածը տաս նրան
ուտելու, կառողջանայ: Բայց դեղը չեն բերել,
կամ բերել են չէ խմել հիւանդը: Հարցնում ես,
ինչի ատած չէք կատարել, տաք էք պահել,
պատասխանում են՝ չախր կը մրսի է՛ս: Ինչ եր-
կարացնեմ, ամենայն օր բացատրում ես բժշկելու
պահանջը, ամեն բան կարգի ես բերում, գնում ես,
գալիս ես և հիւանդին տեսնում ես երեք ծածկոցի
տակ, չափն զլիքի, թթու խմոր ձեռք, որ
վերջի վերջի նրա ստամոքսը փչացնում է: Հի-
ւանդը չէ առողջանում, աղգականները բժշկից
անբաւական են, ասում են. «Բնիլ չես կարողա-
նում բժշկել»: Վերջապէս զղկելով և տեսնելով
որ նախապարտունների դէմ մաքառելն անկա-
րելի է, օգուտ չես կարող բերել, դուրս ես գնում
հիւանդի տանից, որ էլ նրա սենեակը չը մտնես
և անմօղ տեղ ժամանակ չը կորցնես:

2) Կան մի ուրիշ կեղծ հիւանդներ, որոնք զը-
ծուար հիւանդութիւն ունեն և բժշկից պահան-
ջում են կարճ միջոցում բժշկել նրանց, որովհետև
չեն կամենում գործից յետ ընկնել. բայց ոչ աշ-
խատում են պատուէրներին հետեւել, և ոչ էլ դեղ
խմել: Զարմանալի է, որ այսպիսի մարդիկ կան,
բայց ինչ պէտք է անել որ կան, սկսում են բժշկել,
մի օրում չէ առողջանում, տես թէ ինչ կոպիտ
վարք ես տեսնում, թէ իրանից թէ աղգականնե-
րից և ասում են. «Ես մի իլլա՛ւ արա է՛ս»:

3) Բժշկին կանչում են մի հիւանդի մօտ, բժշկի
պատուէրները չեն կատարում, երեք օրում հի-
ւանդը չէ առողջանում, որովհետև անկարելի
է այդպէս շուտ բժշկելը: Հիւանդաւորը և հի-
ւանդը, կարծելով որ բժիշկը չէ հասկանում իր

ցաւը, (թէ ես ցաւը շատ հասկանալի է) կամ լաւ
ուշադիր չէ, իսկ չէ կամենում հասկանալ, որ բը-
ժիշկելու համար ժամանակ է հարկաւոր, այդ բը-
ժիշկից ծածուկ կանչում են մի ուրիշ բժիշկի, Նը-
կու բժշկիցն ունի առանձին ժամեր գալիս են, իրենց
զեղերը գրում են: Հիւանդատէրը երկրորդ բժիշկի
զեղը փորձում է երկու օր և եթէ այդ միջոցում
չօգնեց, սկսում է միւս բժիշկի զեղը տալ, (թէ-
պէտ և ջոկ ջոկ երկու զեղերն էլ լաւ են, բայց մի-
մեանցից յետոյ տալով, կարող են վատ ներգործել)
կամ ոչ մի բժիշկի զեղն էլ չէ տալիս և հրաւիրում
է մի պառաւ կին, որ և սկսում է բժշկել, իսկ
բժիշկները շարունակում են գնալ և գալ. յան-
կարճ պատահում են միմեանց.— «ճ, բարե, բարե,
երեւի երկուսովս էլ բժշկում ենք», կարծեմ, պա-
տասխանում է նա: Փննի օր է որ բժշկում էք.
տաս օր կայ, իսկ զեղը—8 օր կը լինի: Երկու
բժիշկն էլ անբաւական են, խաբւել են և անմեղ
տեղ տանվել: Տասն օր բժիշկող երեւի վիրաւոր-
ված համարելով, գնում է, իսկ ութ օր բժիշկողը
մնում է, եթէ խնդրում են, եթէ նրա զեղերը
գործ են ածել: Միւս դէպք—բժիշկը երկար ժա-
մանակ բժշկում է, հիւանդի դրութիւնը լաւանում
է, բայց տանեցիկ այդ չեն կարողանում նկատել,
մի օր և ինչ կերպիւ վիրաւորում են բժիշկին, սա
սուր կտրում է այդ անից, առանց վարձաբա-
րելն ստանալու: Կանչում են միւսին, յետոյ սը-
բան էլ են փախցնում տնից, գալիս է երրորդը,
այն ժամանակ, երբ արդէն երկու բժիշկ մի միջոց
աշխատել են և դրանց չորհով հիւանդութիւնը
համարեա թէ վերջացել է, այս երրորդը մի քանի
օր գալիս է, գնում է և հիւանդն առաջ է:

Այս երրորդին համարում են բժիշկող, իսկ այն
երկուսին, որոնք հիւանդութեան սկզբում, ուրեմն
զո՞ւտար ժամանակն էին պատահել, նրանց համա-
րում են տգէտ: Վերջի բժիշկը երկու վիշտի հա-
մար ստանում է 3—5 րուրի և հիւանդատէրը ա-
սում է իր կնոջ, այ կնիկ լաւ պրծանք, հա, 3—5
րուրով, երկու ամիս բժիշկ տարանք, բերինք:
Վճարիւմ աղա, և նա ուրախ է, որովհետև ճարպիկ
է կարծում իրեն:

նկերներն անուամբ էին, քաղաքում է դպրոցից, եթէ այդպէս կարելի է ասել 3-րդ կէտի հիման վրա, որովհետեւ օրինակի դէպքը, կամ նրա մասին ինքնին չեն հասկեր չեն պ. տեսչին Այդ մասին հոգաբարձուները իմացան, երբ օրինակի պատրուկը դպրոցից կատարված իրողութիւն եղաւ: Չիղիանեանը, ինչպէս ասում են, հոգաբարձուներին քթից մասն է ասում: Յիշեալ օրինակը գիտէր դպրոցի համար, բացի սորանից օտարացած չըմանին պատկանելով, նրան հարկաւոր էր գրաւել, երբ նա ինքն սկսեց կրկին մօտենալ հայութեանը: Չիղիանեանը իր ազգականներով և նրանց բարեկամներով է լցնում դպրոցը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՒՔԻՒՆ

Գողղիական ճէպաւորները յունիս 28 թուոյն մէջ հետեւեալ հատուածը կը կարդաւ: Ցատեան Ասեմ. Յարութիւն էջէն տիկին վերտին ի պաշտօն կոչուելուն առթիւ:

«Ա. Պօլէն հեռագիրը մը նախընթաց օրը կը ծանուցանէր թէ Ցատեան Յարութիւն էջէն տիկին արտաքին գործոց նախարարութեան խորհրդական անուանած էր: Այս անուանումն ուշադրութեան արժանի է մանաւանդ այն նկատմամբ որ Յարութիւն էջէն տիկին անցեալը կրնայ Օսմանեան աշխարհավարութեան արդի տրամադրութեանց վրայ լոյս մը ձգել: Արտաքին գործոց նոր խորհրդականն Հայագրի մ'է, որ մեծ դեր խաղացած է Մահմուտ-Նէտիմ փաշային նախարարութեան մէջ: Բայց ինչ որ ալ լինի սորա մասնակցութիւնն 1875 հոկտ. 6-ի հրամանագրին պատրաստութեան մէջ, որ Օսմանեան պարտուց տոկոսներուն վճարումը դադարեցուց, հաւաստի է թէ ինքնին չէր համապատասխան տար ցոյց առաւ եւրոպայի նկատմամբ բացորոշակէս հաշտարար աշխարհավարութիւն մը բռնելու, և զարմանալի է զոր վերջին ժամանակներս փորձ փորձեց մերձեցում մը յառաջ բերելու Պ. Վոշէնի և ներքին գործոց նախարար Մահմուտ Նէտիմ փաշայի միջև, որոյ խորհրդականը լինելէ դադարած է: Եւ պաշտօնավարութիւնը մասնաւորապէս նշանաւոր ընող գործերէն մին եղաւ Օսմանեան և Աւստրիական երկաթուղեաց կցուելուն նկատմամբ Աւստրիոյ հետ կնքուած պայմանագրութիւնն: Այն ժամանակ Յարութիւն էջէն տիկին Աւստրիոյ հետ համաձայնութեան հաստատութիւն կուսակից մը համարուած էր:

«Ա. Պօլէն հեռագիրը կուսակցութեան Յարութիւն էջէն տիկին իրեն Հայագրի չը կըրնար ուշադրութիւն չընծայել Հայաստանի բարենորոգմանց խնդրոյն: Դժբաղդաբար կը վախճուի որ Յարութիւն էջէն տիկին արտաքին գործոց խորհրդական անուանելուն Հայկական խնդրոյն լուծմանն օգուտ չընէր: Վասն զի միշտ տեսնուած է որ Հայք պաշտօնի հասած ժամանակներն խիստ զգուշանումն են իրենց վարքին այս մասին: Բայց խորհրդաւորութիւն մը կայ որ պէտք է իշխէ մտաց: Երբոր Իուսէն Հայեր կը գտնէ, որոց չը վարանիր իւր արտաքին աշխարհավարութեան և եւրոպայի տնօրէնութիւնը յանձնել, ինչպէս կը լինի որ մինչև ցարդ չէ կրցած Հայագրի կառավարիչ մը գտնել Հայաստանի համար: Եւ սակայն բարենորոգմանց ամենէն պարզ և լաւագոյնը չէ՞ր լինել, ինչպէս նաև ամենէն մտացի և զանալի եւրոպական միջամտութեան առաջըն ի սպաս առնելու:»

(Մատիս)

ՊԱՏԱՍԽԱՆԱԳԻՐ Բ. ԳՐԱՆ

Ահաւասիկ պաշտօնական պատճէն Բ. Գրան ծանուցագրոյն, ի պատասխանի տէրութեանց համիմաստ ծանուցագրին վերջին մասին, որ Հայկական խնդրոյն կը վերաբերէր:

«Պարոն Գրան. Պատիւ ունիմ պատասխանել Ձեր Վսեմութեան յունիս 11 թուոյն ծանուցագրոյն այն մասին, որ Պէրլինի դաշնագրին 61-րդ յօդուածին տրամադրութեանց կը վերաբերի, տրամադրութիւնը որը նոյն յօդուածին վերջին հատուածին մէջ բացատրուած են:

«Նայերական կառավարութիւնը, պատերազմին արտադրած ամեն տեսակ մոռհոգութեանց և դժուարութեանց հակառակ, միշտ իւր մտաց առջև ունեցած է այս տրամադրութեանց գործադրութիւնը, և Բրիտանական ամեն մասերն և միւս նահանգները քանի մը ձեռնհաս պաշտօնատարներ զրկեց, որը պաշտօն ունէին յարմարագոյն միջոցներ փնտռել թէ՛ հայոց և թէ՛ Վեհ. Սուլթանին միւս հաւատարիմ հպատակաց ապահովութիւնը ընձեռելու համար, և նոյն միջոցներուն գործադրութեան եղանակը ցուցնել իրենք իսկ գործադրելով ինչ ինչ միջոցներ, որը իրենց արածութեանց շնորհակալութեամբ կը մտնէին: Այս յանձնարարներն զատ, յայտնի է նաև թէ կարծ միջոցի մը մէջ Օսմանեան կառավարութիւնը քաղաքային դատարանները գործադիր իշխանութիւնէն անջատեց, եւրոպայի մէջ եղածին պէս, և տալիս կը ջանայ լաւ կազմաւորութիւն մը տալ անոնց, և ամեն տեղ հարկ եղած փորձերն ընել՝ տրոց և տասնորդաց հաւաքման նոր եղանակ մը հաստատելու նպատակաւ, որպէս զի ժողովրդոց հանգստութիւնն ու հանգրաւութիւնն ապահովին, և վերջապէս կառավարութիւնն սկսած է ժամտարմա և Փոլիս կոչուած ոստիկանական մարմիններ հաստատել քանի մը տեղեր, բնիկ և օտարազգի քանի մ'ապալից պաշտօն յանձնելով որ այս երկու հաստատութեանց վրա օրինաց ծրագրեր ներկայեն, և ի նկատ առնելով ինչ որ անոնց յաջողութեան կրնայ նպաստել:

«Այս քննութիւններէն կը հասկացուի թէ ժողովրդոց բնաւորութեան և պիտոյից յարմարագոյն բարենորոգմանց կարգին մէջ, առայտմամբ ամենէն ստիպողական և ազդու ծանուցումներն են Նահիէից (զիւղաւորաց, քօմիւն) կազմութիւնն և բաշխումն, ինչպէս նաև երեսնադատ ատենից հաստատութիւնն: Ուստի ի դէպ կը տեսնուի ինչ ինչ մանրամասնութեան մէջ մտնել այս երկու կէտերուն նկատմամբ, որը ապահով և ստորդ կերպիւ մը բարեկարգութիւնն ու հասարակային ապահովութիւնն երաշխաւորելու սահմանաւ են: Ամեն Գաղա (գաւառակ) զիւղաւորաց պիտի բաժնուի, և ասոնք ալ իրարու մօտակայ զիւղերէ պիտի բաղկանան:

«Զիւղաւորաց խորհուրդները բնակեաց կողմէ պիտի ընտրուին, և կառավարութիւնը զիւղաւոր խորհրդոյն անդամներէն մին նոյն զիւղաւորին պէտ պիտի անուանէ: Այս պետը գործադիր իշխանութեան վերաբերութիւն ունեցող ինչ ինչ իշխանութիւններ ունի, քաղաքականական պաշտօններ ալ կը վարէ, և Գալապաղէս (ղեր-կառավարիչ) կախում ունի: Գիւղաւորաց պետը բնակեաց մեծամասնութեան կրօնէն պիտի լինի, որոց կողմէ պիտի ընտրուին, և այս պարագային մէջ իրենց օգնականները փոքրամասնութեան կրօնէն պիտի լինին: Ժողովրդեան քուէիւ որոշուած և չորսէն մինչև տասն անդամներ բաղկացեալ խառն խորհուրդ մը զիւղաւորաց պետներուն պիտի օգնեն: Այս պետներն և զիւղաւորական խորհուրդները միայն առաջին անգամ գաւառակաց (գալմապալմութեանց) վարչական խորհուրդներուն կողմէ պիտի անուանին, որը ամեն մի զիւղաւորի բնակեաց մէջէն պիտի որոշին զանոնք:

«Գիւղաւորները մը զուլն եղող ամեն պետ իւր հրամանաց ներքև ոստիկանութիւն մը պիտի ունենայ, որոյ թիւը տեղւոյն իրական պիտոյից համեմատութեամբ պիտի կրնայ աւելնալ: Այս զինեալ զօրութեան պաշտօնը պիտի լինի զիւղաւորին բարեկարգութիւնն

ու ապահովութիւնը պահպանել, չարագործներն և ընդվարչածները ձերբակալել և բնակիչները պաշտպանել ամեն բնութեան և կեղեքման դէմ: Ամեն ոստիկանախումբ միւս զիւղաւորաց ոստիկաններուն օգնութիւնն ու գործակցութիւնը պիտի կրնայ խնդրել առաջակայ հարածման մասին միատեղ գործելու և յաջողելու համար:

«Այս ոստիկաններն զատ, ամեն նահանգի մէջ, յատուկ կանոնադրութեան մը համեմատ, նահանգային ոստիկանութեան մարմին մը պիտի կազմուի, որոյ նպատին և զինուորները տէրութեան ամեն կարգի հպատակներէն պիտի ընտրուին, և որ կուսակալին հրամանաց ներքև պիտի դրուի, և կառավարչաց և դեր-կառավարաց տրամադրութեան ներքև պիտի գտնուի: Այս նահանգային ոստիկանութիւնն հրամանատար պիտի ունենայ փորձառու սպայներ, և ամեն անգամ որ պէտք լինի, զիւղաւորաց մէջ զանազան ոստիկանաց պիտի օգնէ: Այս կազմաւորութեան յառաջ գալիք առաւելութիւնները մի առ մի թուել ներկայ ծանուցագրին մէջ անհնար է: Բաւական է հաստատել աստ թէ այս կազմաւորութիւնը մի և նոյն ժամանակ ազդու միջոց մը պիտի լինի զիւղաւորական դպրոցաց թիւն աւելցնելու, երկրագործութիւնն յառաջ տանելու և հաղորդակցութեան ծանրաշնորհ բարեւոյցներ խնամք զիւղաւորացեաց և զիւղաւորական խորհրդոց:

«Սոյն անօրէնութիւնը Սելանիկի Վիլայէթին գաւառականներէն միոյն մէջ ի գործ դրուելով, կարծ միջոցի մէջ լաւագոյն արդիւնքներ յառաջ բերած է ի մեծ գոհունակութիւն տեղական ժողովրդեան: Ուրեմն այս պիտի տնօրէնութեան մը զիւղաւոր արդիւնքը պիտի լինի հաստատուն հիմանց վրա դնել հասարակային և անհատական ապահովութիւնն:

«Այս ապահովութեան երաշխաւորելու ուրիշ զօրեղ միջոց մ'է, ինչպէս ըսինք, երեսնադատ ատենից հաստատութիւնն: Այս դատարանը կարգաւ պիտի պարտին այն գաւառներն, ուր իրենց ներկայութիւնն հարկաւոր ծանցուի, և ուրիշներու վերաբերեալ դատեր պիտի տեսնեն հոն: Գործողութեան այս կերպը մեծ առաւելութիւններ կ'ընծայէ, ըստ որում նոյն իսկ տեղւոյն վրայ հարցաքննութիւնն ու դատաստանն աւելի դիւրութեամբ պիտի կատարուին քան թէ երբ դատը Սանճաքաց միայն երեսնադատ ատենից յանձնուած լինէր, որովհետեւ միշտ այնպէս կը պատահէ որ վկայութիւնն անհրաժեշտ նկատուած անձինք այդ Սանճաքաց դատարաններուն առջև ելնել և կամ մինչև իսկ պարագայէ վկայ լինի չեն ուզեր միջոցի մեծ հեռաւորութեան, հաղորդակցական դժուարութեանց, ժամանակի կորուստն և բազում ծախուց պատճառաւ, որոց ամենն ալ ի հարկէ արդեւներ կը հանեն արդարութեան ընթացից առջև: Օսմանեան կառավարութիւնն արդէն հասարակային պաշտօններու կոչած է կարող և պարկեշտ անձինք՝ առանց կրօնի խորութեան: Յայտն հետէ այս իրողութիւնն աւելի ընդարձակ կ'իրաւութիւն պիտի ստանայ, և Բ. Գրան պիտի հսկէ որպէս զի մօտոց գործողը հաստատուի:

«Նոյնքան կարեւոր ուրիշ անօրէնութիւն մը կայսերական կառավարութեան հոգածութեան առարկայ եղած է, այն է՝ հասարակային կրթութեան և հանրօգուտ շինութեանց յառաջդիմութիւնն, որը երկրին բարեկեցութեան զիւղաւոր պատճառներն են: Հետեւաբար, մարտասանց, աղահանգաց, ծխախոտի և ելգալի հատոյթներէն զատ, միւս հաստոյցի մէջ տասնութորդը նահանգային սնտուկին մէջ պիտի թողուի կրթութեան և հասարակային շինութեանց գործին յատկացուելու համար, այն գումարներէն զատ, որը ընդհանուր եկամուտներէն կը յատկանան Վիլայէթին ընդհանուր ծախուց: Աւելորդ է ըսել

թէ այս տասնութորդ մասն հետոյհետէ պիտի աւելնայ քանի որ տէրութեան հասոյթներն աճին:

«Վիլայէթից նկատմամբ կատարեալ կանոնադիր մը, որ գաւառաց մէջ առնուած փորձառութեանց և եղած քննութեանց վրայ հիմնեալ է, այժմ կուսուցիտարուի: Այդ կանոնադիրն ի մօտոյ Ասիական թուրքոյ բոլոր նահանգաց մէջ ընդհանուր կ'իրաւութիւն պիտի ստանայ: Նոյնպէս, կուսակալաց իշխանութիւններն աւելի ընդարձակ և անոնց պաշտօններն երաշխաւորեալ պիտի լինին:

«Այսպիսի են ահաւասիկ, Պ. Գրան, ի գործ դրուելիք յատուկ կանոնադրոց զիւղաւոր կէտերը: Ներկայս Ձեր նկատողութեան ներկայելով, ցաւով կը յայտնեմ աստ թէ ամեն անգամ որ սովորական ուրիշներ կը գործուին այն տեղերն, ուր Հայք ալ կը բնակին, — ուրիշներ, որոնց գործուելը բնական է աշխարհի բոլոր երկրներուն մէջ, — կըրտանանք պաշտօն ստանձնած լինել կը թուին երեսնադատ ուրիշներ հնարել և այդ սովորական ուրիշներուն վրայ աւելցնելով, զանոնք իբրեւ ձմարիտ ներկայել եւրոպայի և գաւառաց մէջ նստող հիւպատոսաց առջև:

«Վերջացնելով պարտ անձին կը համարեմ վճարական և բացորոշ կերպիւ հաստատել Ձեր վսեմութեան թէ Վանայ, Տիարպէթի, Պիլիսի, Երզրումի և Սիւլայի Հայ ժողովրդոց պաշտօնական ազգահամարը սա արդիւնքը տուած է. — այս վերջնոց թիւն ամբողջ ժողովրդեան 100-ին 17-ն է, միւս ոչ — իսլամ ժողովրդոց թիւն 100-ին 4, և Իսլամ բնակեաց թիւն՝ 100-ին 79-ը:

«Վերջապէս, աւելորդ կը համարեմ յայտարարել թէ Բ. Գրան Բերլինի դաշնագրին ստորագրող տէրութեանց պիտի իմանէ այն միջոցները՝ զորս ինք ձեռք կ'առնու բարենորոգմանց յաջողաբար գործադրութեան համար Բրիտանական և Անատոլիոյ նահանգաց մէջ, ուր Հայք ալ կը բնակին: Բ. Գրան վերջելեալ ծանուցագրին լաւ հասկացողութիւնը դիւրացնելու համար գաւառական ստորաբաժանմանց և կառավարաց համեմատական ցուցակը հոս կը դնեմք. Վիլայէթ — Նահանգ. Վալի — Կուսակալ. Սանճաք — Գաւառ. Միւլէթսարըք — Կառավարիչ. Գաղա — Գաւառակ. Գալմապալմ — Կառավարիչ. Նահիէ — Գիւղաւորութիւն. Միւլտի — Գիւղաւորութիւն: (Մատիս)

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

10-րդ, 3 օգոստոսի: Կանգաւորի մէջ թշնամին այսօր ամբողջ է շինուած: Ասում են, որ երկու բրիտանական օճիկները զերի են էլիւր-խանի մօտ:

ՓԱՐԻՑ, 3 օգոստոսի: «La Verité» լրագրի մէջ տպւած է Գաւառաւորի նամակը, որ կարծիք է յայտնում զիւղաւոր խորհուրդների անդամներին վերջին ընտրութիւնների բնաւորութեան մասին: Ընտրութիւնները դեմօ-կրտական անուանելով, Գաւառաւոր ասում է. «Երկրի մէջ ձիւղ հանրապետական ձեւ գործադրելով, Պարսիկան կարելութիւն կը ստանայ իր ոյժերը նորից ընդարձակել, զրաւել իրան վայել տեղը աշխարհի մէջ, նորից տիրապետել իրանից ոյժով լրացած նահանգները և իր վերականգնած ամբողջութիւնը եւրօպական խաղաղութեան գրաւական դարձնել:»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 օգոստոսի: Երէկ դուրս գնաց բաղաւթի Գրէյը: Նրա բացակայութեան ժամանակ մինիստրութեան կառավարութիւնը յանձնեցած է նրա օգնական Բունդէյին:

Խմբագիր — Գրատարաւոր ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻՆԻ

Типографія А. А. Михельсона